600.0028.18.12.00

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2000 թվականի № 28
ք. Երևան

«Հայգազարդ» փակ բաժնետիրական ընկերությանը ջերմային էներգիայի արտադրության և տեղափոխման գործունեությունների լիցենզիաներ տրամադրելու մասին

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի բ) ենթակետը և 42-րդ հոդվածը, ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի 1998 թվականի օգոստոսի 28-ի № 39 որոշմամբ սահմանված կարգը և ելնելով սպառողներին ջերմային էներգիայի հուսալի ու անվտանգ մատակարարման ապահովման անհրաժեշտությունից, ՀՀ էներգետիկայի հանձնաժողովը **որոշում է.**

1. Բավարարել «Հայգազարդ» փակ բաժնետիրական ընկերության ներկայացրած հայտերը և տրամադրել՝

1.1. ջերմային էներգիայի արտադրության գործունեության լիցենզիա՝ 2 տարի գործողության ժամկետով.

1.2. ջերմային էներգիայի տեղափոխման գործունեության լիցենզիա՝ 2 տարի գործողության ժամկետով:

2. Ընդունել ի գիտություն, որ լիցենզիաները սահմանված կարգով կգրանցվեն և ուժի մեջ կմտնեն պետական տուրքի վճարումը հաստատող փաստաթուղթը «Հայգազարդ» ՓԲԸ-ի կողմից ՀՀ էներգետիկայի հանձնաժողով ներկայացվելուց հետո:

3. Մերժել ջերմային էներգիայի բաշխման լիցենզիա տրամադրելու վերաբերյալ «Հայգազարդ» փակ բաժնետիրական ընկերության ներկայացրած հայտը՝ հաշվի առնելով ջերմային էներգիայի բաշխման գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ միջոցների բացակայությունը:

ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի նախագահ՝ **Վ.Մովսեսյան**